

# ՏԻԳՐԱՆ ՍՄԱՐԿԵԱՆ

1891 - 1978

Պատրիարքական Աթոռոս ցաւալի կորուստ մը արձանագրեց Տիգրան Ամսարեանի մահուամբը : Բարեկամ մը , Համակիր մը եւ ամբողջական նուիրումով Երուսաղէմի կապուած հողի մը կը սպանք այս աշխարհէն իր մեկնումով : Ամսակարկ եւ խանգավառ պատրաստակամութեամբ , ան միշտ պատասխանեց մեր կոչերուն եւ հասաւ մեր օգնութեան , երբ Հիմնեցինք «Երուաղեմի Հայ Պատրիարքութեան Բարեկամներու Միութիւնը» : Տաօք տարիներ շարունակ , ան եղաւ Միութեան քարտուղարը , որովհետեւ խորապէս կը հաւատար Երուսաղէմի առաքելութեան :

Տիգրան Ամսարեան ծնած էր Տիգրանակերտ 1891-ին եւ ծնողքին հետ Միացեալ Նահանգներ Հաստատուած 1900-ին : 1912-ին ստացած էր Ամերիկան իր Համատակութիւնը , եւ իրուն փաստարան վկայուելէ նոր Նիւ Եորքի Օրէնքի Համալսարանէն , մտած էր կեանքի ատպարէզ՝ Նիւ Եորքի եւ Նիւ Ճրդղիի նահանգներուն մէջ դործելով :

Համաշխարհային Առաջին Պատերազմին զինուորագրուած էր , ծառայելով Ամերիկեան Մովուժին մէջ : Այդ շրջանէն կը սկսի Հանգուցեալին Հանրային դործունէութիւնը , որ կը տարածուի իր ամբողջ կեանքին վրայ , մինչև մահը : Ան Հիմնադիրներէն եւ զեկավարներէն էր Թէքէեան Մշակութային Միութեան , որուն ի նպաստ բազմաթիւ այցելութիւններ կատարած էր Միացեալ Նահանգներու զանազան նահանգները , Հարաւային Ամերիկա , Եւրոպա եւ Միջին Արևելք : Գործոն եւ Հիմնադիր անդամ էր նունիրն Ակթի (Նիւ Ճրդղի) Վարդանանց Ասպետներու մասնաճիւղին : Անդամ էր նաև Հայ Ռւսանողներու Միութեան , Հայկական Ռւսումներու Ազգային Միութեան , Հայկական Իրաւունքներու Շարժումին եւ Տիգրանակերտի Հայրենական Միութեան :

Իրեւ մասնագէտ Հայկական Հարցի , 1976 Մայիսին Հանգուցեալի վկայութիւն տուաւ Միացեալ Նահանգներու Ներկայացուցչական Տան Միջազգային Յարարերութիւններու Յանձնաժողովին առջեւ , զատապարտելով 1915-ի ցեղասպանութիւնը :

Տիգրան Ամսարեան ջերմ Հաւատացեալ մըն էր , եւ անսակարկ աշխատած էր Հայաստանեայց Եկեղեցիի պայծառացման Համար :

Իր բոլոր զբաղումներուն եւ աշխատանքներուն կողքին , տասնեւուկ տարիներէ ի մեր նկարչութիւն կ'ընէր (իւղաներկ) . իր դործերէն ոմանք կը դանուին Ս . Աթոռիս Ագեքս եւ Մարի Մանուկեան Ժառանգաւորաց Վարժարաւնին Նին եւ Բնծարարանին մէջ :

Տիգրան Ամսարեան կը մեռնէր Ապրիլ 25ին , սրտի կաթուածի իրը հետեւանք : Յուղարկաւորութիւնը տեղի ունեցած է 28 Ապրիլին , Եղինիքն Սիթիի Ս . Խաչ Եկեղեցիին մէջ , իսկ Հոգեհանգստական մասնաւոր պաշտօն կատարուած է յաջորդ օր , Նիւ Եորքի Առաջնորդանիստ Ս . Վարդան Տաճարին մէջ :

«ՍԻՐՆ» իր խոր ցաւակցութիւնը կը յայտնէ Այրի Տիգրի Տաթևնիկ Ամսարեանին եւ զաւակներուն , ազօթք ու խունկ մատուցանելով ի Տէր հանդուցեալ Տիգրան Ամսարեանի յիշատակին :